Նոյն վերաբերումը նկատելի է եւ ձեռագրական քաղուածների վերաբերեալ։ Նշանակել է ձեռագիրները, նրանց թուականները, եթէ յայտնի են, գրութեան տեղը, գրիչը եւ մանր հանգամանքներ, որ կարող են նպաստել յիշատակութեան պատմական, թէ գրական արժէքը որոշելու։

Ահա այս եղանակով հաւաքել է մի կողմից ձեռագրական յիշատակարանների մէջ թաքնուած տեղեկութիւնները, միւս կողմից՝ մամռոտած քարերի գրութիւնները, զուգել, դասաւորել եւ կազմել ամբողջական պատկեր այնպիսի խնամքով, այնպիսի սիրով որ հաղուագիւտ է մեր ամեն ինչ ուրացող դարում։ «Հոգեւոր կեդրոնները» յառնում են իրենց տխուր աւերակներից, քարերը՝ ծանրաբեռնուած գրութեամբ եւ պէսպէս յիշատակներով սկսում են խօսել։ Ձեր առջեւն են չէն մենաստաններ, որ ծաղկում են վանահայրերի հսկողութեան տակ, լի վանականներով, որոնք միայն աղօթողներ չեն, այլ վարդապետներ, ուսուցիչներ են, որ «դաս են ասում», ճարտար գրիչներ են, որ ջրտագրում են հնացած ձեռագիրները կորստից ազատելու համար նախնեաց ժառանգութիւնը, շնորհալի ծաղկողներ են, որ նկարազարդում են ձեռագիրները, եւ հմուտ ճարտարապետներ, որ վերականգնում են աւեր չէնքերը եւ կառուցանում նորերը։ Բարեպաշտ մարդիկ այր թէ կին, իշխանաւոր թէ համեստ աշխատաւոր, չեն ղլանում իրենց նուէրները մեծ հաստատութեանց, գիտնալով որ այն տեղ են կուտում հայ ժողովրդի գոյութեան հիմ՝ բարոյական հիմքերը։

Շնորհիւ Պոչեան տան հովանաւորութեան սկսում է մի մտաւոր շարժում, մի իրական վերածնունդ, որ շուտով տալիս է պանծալի դէմքեր — Խաչատուր Կեչառեցի, Յովհաննէս Գառնեցի, Մխիթար Այրիվանեցի եւ վերջապէս Գլաձորի Գիտուն Կաճառը բոլորուած մեծ վարդապետի՝ Եսայի Նչեցու շուրջը։

Հ. Գարեգինը նկարագրել է խանդավառ ոգով այս նոր հոսանքը եւ նորա բարերար ազդեցութիւնը հայ արուեստի, գիտութեան եւ եկեղեցական քաղաքակնութեան վերայ։ Առանց խախտելու հին գրականութեան եւ լեզուի իրաւունքները, այլ ընդհակառակն մշակելով հին հեղինակների վերայ իրենց միտքն ու աշխարհայեացքը, նրանք սկիզբն դրին նոր եւ աշխարհիկ բանաստեղծութեան։ Խաչատուր Կեչառեցին, Ֆրիկ, Յովհաննէս Երզնկացին միջնադարեան հայ քնարերգութեան կարապետներն են։

«Հանցգուն զինչ աշնան քամին որ թափէ զտերեւ
ի ծառէն,
Հողմով մեղանաց իմոց զրկեցայ յանանց պսակէն»։

Ահա մի նմոյշ, որ նոր է ե՛ւ լեզուով ե՛ւ տրամադրութեամբ եւ մինչեւ իսկ չափով, որ հետեւողութիւն է բիւզանդական πολιτικὸς στίχος կոչուած չափածոյ գրութեան։ Ուշագրաւ երեւոյթ է։

Գառնեցու խրատներն եւս նորութիւն են իրենց աշխարհային բնաւորութեամբ. «մի՛ լինիր կոշտ եւ կոպիտ, անհանճար եւ անիմաստ». «մի՛ մնասցեն առ քեզ վարձք վարձականաց եւ աշխատութիւնք մշակաց». «մի՛

ժամանակակիցները գնահատել են արժանապէս Պոչեան տան նշանակութիւնը, անուանելով Պոչին «զարդ հեծելի, որ զերկաթի դուռն առնէր փոշի, աջ ու բաղուկ նոր Սիոնի, հիմն հաստատ հայոց հաւատի»։

Պոչեանց գործունէութիւնը քաղաքական եւ հասարակական ասպարէզում, նրանց շինարարութիւնը, կառուցած վանքերն ու բերդերը լուսաբանուած են ամէն կողմէ այն հատորում որ Գարեգին Սրբազանը լոյս է ընծայել Երեւանում 1928 թուին։ Ներկայ հատորը նուիրուած է բացառապէս նոյն առհմի հովանաւորութեան ներքոյ ծաղկած հոգեւոր կեանքի, մտաւոր հոսանքների, որոնց կենտրոններ հանդիսացան Կեչառիսի, Այրիվանքի եւ Գլաձորի գիտնական մենաստանները։

Այս հատորի եւ թէ արդէն լոյս տեսածի առաղձը, հիմը կազմող փաստացի նիւթերը գումարուած են առանձին հատորում, կցած աշխատութեան որպէս երրորդ մաս կամ հատոր։ Սա բաղկացած է երեք բաժնից. առաջինը պարունակում է մերձաւորապէս երկու հարիւր արձանագրութիւն.* երկրորդը մօտ հարիւր ձեռագրական յիշատակարան, եւ երրորդը՝ մի տասնեակ եւ աւելի մատենագրական նշխարներ։ Ցատուկ ուշադրութեան եւ գնահատանքի արժանի է մանաւանդ այս ժողովածուն, որ հեղինակը յաւելածական է համարում, բայց գործի ամենէն կարեւոր եւ մնայուն մասն է։ Ճշմարիտ է որ արձանագրութիւնների եւ յիշատակարանական քաղուածների մեծագոյն մասը նախապէս յայտնի էր հայ բանասիրութեան, շնորհիւ Շահխաթունեանի եւ Ջալալեանի եւ Մխիթարեանի գործերին, որոնց լիակատար ամփոփումը տուել է Հ. Ալիշան «Սիսական» եւ «Այրարատ» երկերում, բայց եւ այնպէս Հ. Գարեգինի ժողովածուն ունի նորութեան բոլոր առաւելութիւնները։ Անձամբ եւ տեղի վրայ ստուգել է գրեթէ բոլոր արձանագրութիւնները, որ իր նախորդները արտագրել են եւ աւելացրել նորերը։ Շրջել է բազմաթիւ վայրեր եւ վանքեր չէն թէ աւերակ, Բջնիից սկսած մինչեւ Վայոց Ձոր եւ Ջահուկ, դիտել եւ նկարագրել եւ երբեմն լուսանկարել այցելած վայրերը, չէնքերի դիրքը, ներկայ վիճակը, նշանակել է հաւատարմօրէն արձանագրութիւնների տեղը պատերի վերայ եւ ո՞ր մասում, թէ փլատակների մէջ, մի խօսքով նախատեսել է բոլոր պարագաները որոնք կարող են որեւէ նկատումով պիտանի լինել հետազօտութեան ժամանակ։ Համեմատել է տեղն ու տեղը առաջուց ծանօթ արձանագրութիւնների պատճէնները եւ սրբագրել ամենայն բարեխղճութեամբ եւ մասնագէտի սուր եւ գիտակ աչքով։ Ձկայ համարեայ մի արձանագրութիւն, ուրիշներից արտագրուած, ուր որեւէ ուղղում կատարած չլինի, բառ թէ տառ, թէ ամբողջ նախադասութիւն եւ մանաւանդ տեղի եւ անձանց անուններ։

---

*Ի նկատի չի առնուած ուսումնասիրութիւնների ժամանակ մէջ բերուած ամբողջական արձանագրութիւնները։

ՀԵՂԻՆԱԿ